ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2025 թվականի №-Ա

ԱՐՄԱՆ ՎԱՀԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի դեկտեմբերի 25-ի №01/11.1/10836-2024, 2025 թվականի փետրվարի 27-ի №01/11.1/1647-2025 և օգոստոսի 28-ի №01/11.1/7334-2025 գրություններով ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի №139 և №139/1 հասցեներում հայտնաբերվել է Արման Վահանի Պետրոսյանի կողմից առանց թույլտվության 880-890ՄՀց, 902,5-915,0ՄՀց և 1935-1950ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներում շահագործվող բջջային կապի վերահաղորդակ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Արման Վահանի Պետրոսյանին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 17-ի №ՍԾ/34.2-Մ2-9/2848-2025 և օգոստոսի 29-ի №ՍԾ/34.2-Մ2-9/4681-2025 գրությունները, որոնց ի պատասխան՝ Արման Վահանի Պետրոսյանը հայտնել է, որ գրությունների մեջ նշված վերահաղորդակի աշխատանքը դադարեցված է,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Արման Վահանի Պետրոսյանի գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 880-890ՄՀց, 902,5-915,0ՄՀց և 1935-1950ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Արման Վահանի Պետրոսյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 880-890ՄՀց, 902,5-915,0ՄՀց և 1935-1950ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Վահանի Պետրոսյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2025թ.